Ի՞նչ նպատակ ունի բոլշևիկ քննադատութեան այս հերթական ելոյթը: Ինչի՞ են ձգտում սղէտ, բուժ, սահմանափակ Վահանեանները, ինչինան եկեղեցու այդ անտաղանդ տիրացուները: Պատասխանը պարզ է. բոլորովին արմատահան անել հաշ զրականութիւնը Հայաստանի հողից, ստեղծպարծութեան վերջին ուսմարիներն էլ չորացնել խորհրդային զրականութեան անապատում:

Թ Ի Ի Ք Ի Ո Յ Շ ՈՒ Ր Ձ

Ահաւասիկ երկու ամիս է որ գրասենեակէ դրասենեակ, ժողովէ ժողով կը արորբի 1922ի կրմտացուցը: Մասնապէստներ, մասնաւոր յանձնաժողովներ չափեցին-ձեւեցին: Մկրատը բանեցաւ անբնիշտ: Պա՛հ մը 150 միլիոն օսկին անգամ անտանների կը համարւէր, մինչդեռ միւշն 226 միլիոնը հասնել էին երկու տարի առաջ: Ու վերջապէս, ապրիլ 25ին, կանգ առին 171 միլիոնի վրա, որ տակախն չէ վաւերացած:

Օրինակի՛ք Ազգ. Մեծ ժողովին յանձնւած օրն իսկ, վարչապետ Լամիթ փաշա Մոսիւս մեկնեցաւ, թագա՛նդամ և բազմապիսն պատուիրակութեամբ մը: Առաքելութիւնը քաղաքական է, բայց նաև տնտեսա-

կան: Թուրքիան հասած է անկենսապարձ մը, ուր քաղաքականն ու տնտեսականը իրար Փրա՛նուած են: Մէկուն ելքը կը սպասնայ խանդաբել միւսին ուղղութիւնը: Գաղաքականապէս ամբապած Թուրքեան օգնութիւն կաղաղակէ տնտեսական գեանի վրա, փրկութեան զօտմներ կը փնտնէ թէ՛ Ժրնեկ և թէ՛ Մոսկուայի մէջ: Մէկով կը սպասնայ միւսին: Ազգերու Դաշնակցութեան դիմելու լուրերէն անմիջապէս վերջն էր որ սարքեցաւ Մոսկուայի համարողութիւնը, տեսակ մը անապարանքով: Թ՛վ՛Քիք Բիւլետի պէջ հաղիւ հեռաւոր ակնարկ մը սահնուցած էր ժընեւի մէջ, զինթափութեան ճառին առթիւ, և երբ Թուրքիա

զարձաւ, փոխարեւել լրացուցիչ յայտարարութիւններ ընկելու, խնդիրք փակեց և անմիջապէս բեռները կապեց դէպի Մոսկա:

Կը խօսինք, տակաւին, այդ ճամբորդութեան մասին: Առ այժմ ներկայացնենք տնտեսական-եւրոպական տազանապին վերջին փուլերը:

Ինչպէս ըսինք, 1932ի եւրոպացոյց հաշուած են 171,112,700 ոսկի, — նախորդէն 15 միլիոն պակաս: Աւելորդ է ըսել որ, այս անգամ ալ առեւծի բաժինը կը բարւէ ազգային պաշտպանութեան դուրսը, իր գաւառային ստորաբաժանումներով: Այսպէս, ցամաքային ուժերու ճամբը նախատեսուած է 32,167,315 ոսկի, օգլային ուժերու ճամբը՝ 943,000, ծովային՝ 3,605,560, գինւորական դործարաններ՝ 2,954,800, քարտէսներու՝ 547,265, ռառիկան-դիւրոններու ճամբար՝ 8,384,000, Ազատուութեան Տեսչութեան՝ 3,939,000, պահակապարբերու՝ 2,556,130 ոսկի: Գումար՝ 50,588,068: Ուրեմն, ընդհ. էլեքին իրը մէկ երրորդը:

Մինչ անխնայ կը ճամբորդներ կատարած են միւս գլուխներէն, ազգային պաշտպանութեան բաժինը մնացած է գրեթէ անվթար, ինչպէս ամէն տարի: Մասնաւորապէս քննուած են նոր շինութիւնները, կրթական և առողջապահական վարկերը ևն: Բայց, կատարած իննստույթիւններէն և երկու հազար պաշտօնեաներու արձակումէն վերջն ալ, բաց կը մնայ մօտ 30 միլիոն ոսկի: Կա՞յ ուրիշ միջոց, բացի ժողովուրդը քանելէ: Եւ ահա առաջիկ նոր դիւտ մը ես, — «Հաւասարակշռութեան անդրէ»:

Օրինագիծը պատրաստ է արդէն, ոչ միայն այս տարբեր, այլ և միւսներու, յաւելման մասին, և կարծէ ապօրինի, նոր զարգացար մը տարու ճամբը տազանապին ստատիստիկան մասին: —

1. Տազանապի տարբերն պէս, Հաւասարակշռութեան տարբը մըն ալ պիտի գանձի, ամէն ամիս, բոլոր ամասկանաւորներէ, վարձարներէ, ծառայողներէ, պաշտօնեաներէ և այլն:

Տարբը պիտի գանձի 1932 յունիս 1էն, առանց բացառութեան:

Գ. — Գործանութեանց տարբը (Հաստուրք) 6 տոկոսէն պիտի բարձրանայ 10% ի:

Դ. և Է. — Պիտի աւելնան նաև փոխադրութեան տարբերը (ինքնաշարժ, օթնալիւս կային): Այս գլուխէն Հաստից կը նախատեսի Երկու միլիոն:

2. Տազանապի տարբն ալ պիտի շարունակուի, և անոր տեղորոշութեան միջոցին յաւելումներ պիտի ըլլան Հետևեալ տարբերան վրա: —

ա. — Շէնքերու տարբերուն վրա՝ արժմու տարբերն 30էն 50%: Երկու հազար ոսկի նկատուաւ ընթող չէնքերու տարբը պիտի ըլլայ 30%. առաւ հազարի ճամբար՝ 40%, իսկ անկէ վեր եղածներուն՝ 50%: Տարբի ճամբարտութիւնը կէս առ կէս կիջնէ այն չէնքերուն ճամբար որ իրրև ընկարան կը ծառային սեփականատէրերուն: (Այս գլուխէն Հաստից կը նախատեսուի 1,900,000 ոսկի):

բ. — Տեղական շաքարի տարբը հինգ զրուէն 8ի պիտի բարձրանայ (իւրաքանչիւր զիրովին): Գործակէ կեած շաքարին տարբն ալ կը մնայ: (Հաստից՝ 600,000 ոսկի):

Այս միջոցները պիտի բաւեն լեցնելու կարարը:

Պատասխանը կարելի է գտնել, Էրբը լսենք թէ, անցեալ տարի ալ արտակարգ միջոցներ ձեռք առնեցան, և նախահաշիւը Հաւասարակշռուեցաւ թուղթի վրա, բայց տարին չըրացած, 30 միլիոնի բաց մը երբևէ ան կեաւ, խուճապի մասնով օրուս վարչները:

Եւ չարիքանքութիւն չէ ըսել թէ ամենէն առաջ կնիւրերն ինք յուսուէն է, որովհետև, ճիշտ այս արտակարգ խնայողութիւններու և տարբերութիւնի մէջ էր որ, զի մայրական մամուլը չտարբերուէ աւելի Համարած խօսիլ սկսաւ արտաքին փոխառութեան մա-

սին, իսկ Լամէթ փաշան աճապարհեց ուխտի երթալ դէպի Մոսկա:

Արդարև, այլ ևս չենք լսեր նախկին պոռոտախօսութիւնները ազգային տնտեսութեան անկախութեան մասին, ընդդէմ օտար դրամալուծի: Ընդհակառակն, վերջերս թուրք մամուլը սկսեր է բացատրել թէ իրենք երբեք դէմ չեն եղած արտաքին փոխառութեան, և միշտ ալ պէտք են ինն օտար դրամալուծի, երկիրը վերաշինելու ճամբը: Կիսապաշտօնական «Միլիթէթ» իմբադրապետը, Սիբրդի երեսփոխան Մահմուտ, որ մաս կը կազմէ Լամէթ փաշայի պատրիարկութեան, կը գրէր քանի մը շարաթ տալ:

— «Ճաստ տարի առանց քաղաքական և դիւրորական պայքար կը մղէինք: Այսօր ալ տնտեսական պայքար կը մղենք: Այս պարագային մեր կրելիք պարտութիւնը միւս պայքարին պարտութեանէն աւելի արդուաբեր կրնայ ըլլալ: Միտաւ և կենաց խնդիրք մը առչել կը գտնուիմք: Մեզի կը մնայ կամ մեռնիլ, կամ քալել — թէ և նեղութեամբ — և ապրիլ»:

Իսկ ժողովրդական թերթ մը, «Անոն Փոստա», անուղղակի ծաղրելով նորանոր տուրբերը, կը բացազանչէ:

— «Մերք քանիները, բացառիկ կանոնաւորութեամբ մը, ամէն ամիս Հետզհետէ կը թեթեւանան: Կը վախնամ որ քանիներու վիճակած թիւս թեթեւութիւնը փոխանցի նաև մեր խելքին»:

Դեռ առէք յոռալ տանելով Հեղանքը, թուրք թերթը, արջն-ձախէն տրամ ճամբորդութեան խրատներուն առթիւ, կը լքէ Նարբէտոնի հօճայի կառնաւոր պատմութիւնը: — Հօճան կուզէ անօթութեան վարժեցնել իր չէր: Ուստի ամէն օր կը պակսեցնէ ուտելիքը, և օր մըն ալ բուրբոլի կը դադարեցնէ: Ի հարկէ էլը կը ստակի, իսկ հօճան կը բացատրէ իր դրացիներուն: «Թէ և անօթութեան պիտի վարժուի, բայց կեանքը չօգնեց»:

Անօթութեան այս մարգանքը շատոնց սկսած է Անաստուի մէջ:

Գիմենք, նորէն, թուրք թերթի մը վկայութեան: «Վազրթն» է որ կը գրէ:

— Մէկ գոյթ եզ ունեցող դիւղացի մը, բացի առատուններուն կերին և յարկին յատկանշիլք արմտուքէն, շատ-շատ կրնայ ցանել 40 զրիկ ցորին, Հունձը ստանալով 200 դրիւ: Այս Հունձքին 40 զրիկը կը պահէ սերմնուի, 50 զրիկն ալ հացի և ձաւարի: մնացեալ 110 զրիկն է որ պիտի ծախէ և դրամ վերածէ: Գիւղացին այսօր մէկ զրիկ ցորենը կրնայ ծախել 70 զր. և, ուրեմն պիտի ստանայ միայն 7700 զրուէ:

«Արդ, այսպիսի երկրագործի մը կարածի, ճամբու, կենդանիներու տարբեր դումարն է 3000 զր. ուրեմն, իր ձեռքը պիտի մնայ տարեկան 4700 զր. այսինքն օրական 13 զր.»: (Մէկ Փրանք):

Կը նշանակէ թէ՛ Եւրոպացոյցին Հաւասարակշռութիւնը րաւական չէ, «տնտեսական ճամբը Փոնաւրը» չաւելու: Նոյն իսկ եթէ փոխառութիւն մը կնքուի, Անաստուի փեղացին չէ որ պիտի օգտուի: Ի՞նչ բարիք տեսաւ, օտմ. կայսրութեան օրերու կնքուած միլիոնաւոր ոսկի — խկապէս ոսկի — փոխառութիւններէն, որոնք իրրև Հանրային Պարտք իր վրին փաթկուած են այսօր:

Միաց որ, առ այժմ ցնորք է արտաքին փոխառութիւնը: Ամենէն ձեռք-բաց երկիրը, Փրանսան, մինչև Հիմա շլսելու կը գարնէր այդ կարգի առաջարկները, իսկ վերջերս յայտնապէս կը զրացնէ իր չկամութիւնը: Հաւազոյցն պարագային, Հանրային Պարտքի տոկոսները կը իջնեցնէ:

Պարզ է որ փոխառութեան խնդրով ամենէն աւելի շահադրուած են աշխողութեան-դրամատիրական թերթերը: Արդ, «ECHO de Paris», որ աւելի քան ապագայ-

նական է և նաևճոյական, իր արեւելեան դործերու մասնապէսին բերնով կազդարարէր, ապրիլ 30ին.

— «Փոխառութիւն մը, դրամ, պ. պ. Յուրբեր: Անկարելի է առ այժմ: Աւելի վերջը, թիւրևս, երբ պարկուշտութեան և բարեպաշտութեան փաստեր տաք, երբ գալբիք ճարելի մեր դպրոցները, ձեր կործանարար նեղութիւններով ընկնելէ Փրանսական ձեռնարկները, երբ ամէն կապ խզէք Մոսկուայէ հետ, երբ թօթախէք Պերսիոյ լուծը, երբ, երաշխիքներով և գրաւակներով, ձեր ներքին կացութիւնը բարուցելի վիճի, մեզ թոյլ տաք որ ստուգենք թէ մեր ոսկին չպիտի վերածուի թնդանօթի և ռազմանիւթի, երբ վերջապէս հրատարիք վերակազմել Նեղուցներու ապագին-

լած շրջանը»:

Աւելի վճռական եղբակացութիւն մը.

— «Քաղաքական ներկայ պայմաններուն մէջ, այս օր, դրամ դնել զէմալական քարտէսին վրա՛ կը նշանակէ չէնք չինլ ճրարութի մը վրա... Գէմալականութիւնը, ճնշումի և պտտակոտորման վարչամէ, զանի մը մարդոց վրայ միայն հիմնուած է... Նախ մեր քարեկամներուն ուժ տա՛նք: Ոչ մէկ ստ՛ մեր թշնամիներուն»:

Միայն Ամերիկան չէ որ յուսահատեցուց Սարածօզլուն և միւսները: Ահա և Փարիզը: Ահա և նոր բացատրութիւն մը Ըմէթ փաշայի հապճեղ և ցուցադրական ուղեորութեան:

ՀՆՈՒԱԻՈՐ ԱՐԵՒԵԼԻՒԹԻ ԴԵՊՅԵՐԸ ԵՒ ՌՈՒՍ ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ի՞նչ վարճարատարակում ենք ուս սոցիալիստ-յեզափոխականների կողմ Հեռուոր Արեւելքի գէպերի առթիւ: Այս կապակցութեամբ օգտակար է ծանօթանալ, ահհասարակ, ուս քաղաքական տարադրութեան տեսակէտներին նոյն հարցի մասին:

Բնական է, որ չին-ճապոնական բախումն ու զանկախ մանջուրական պետութեան» ստեղծումը ճապոնացիների ձեռքով՝ յուզիք ուս քաղաքական տարադրութեան միտքը: Հեռուոր Արեւելքի խնդիրներն փնջին արդէն կենսական նշանակութիւն ունին Ռուսաստանի համար, իսկ նրանց անդրադարձումը ուսական ներքին գործերի վրա է՛լ աւելի անմիջական ու ճրտոյակ արժէք են տալիս: Եւ զարմանալի չէ, որ չին-ճապոնական ընդհարման չէնց առաջին օրից ուս քաղաքական հոսանքները շտապեցին ճշտել իրենց դիրքերը: Այլից ձախ՝ բոլոր կուսակցութիւններն ու խմբակցութիւնները արտայայտեցին մտնողով կամ հրապարակային ժողովներով: Մասնաւորապէս Փարիզում ստեղծուեցան մի շարք ժողովներ ու դասախօսութիւններ, ուր բազմակողմանի քննութեան առարկայ դարձաւ Հեռուոր Արեւելքի խնդիրը և ուս տարադրութեան բունիւր դիրքի բարցը: Եւ, բնականաբար, ուս քաղաքական միտքը բարձունք մի շարք խայտարղէտ հոսանքների ու ենթահոսանքների:

Ամենից առաջ և միանշամանի որոշ դիրք գրաւեց ալիզողմը՝ բերան ունենալով հայ դասախօսի Արքամ Ղուկասովի «Վոզրոժդենիէ» թերթը: Ռուս միապետականների, պահպանողականների և չափաւոր ազատականների համար խնդիրը ներկայանում էր այսպէս. ճապոնական արշաւանքը մի բարիք է Ռուսաստանի համար: ճապոնիան աչք չունի ուսական հողերի վրա՝ Նա ձգտում է միայն օրոշ տնտեսական փոքրքր ապահովել: Ստեղծելով մանջուրական, մոնղոլական, ապա, դուցէ, և մերձովիսն ու մերձաւորեան «միջնորմ» պետութիւններ, ճապոնիան հնարաւորութիւն կը տայ ուս հակառուչելի տարրերին ամբանալ այդ շրջաններում և ճապոնական օգնութեամբ պայքարել խորհրդոյնի իշխանութեան դէմ: Բացի այդ, անհասանական չէ, որ եթէ բուլղարիների և ճապոնիայի միջև ծագի պատերազմ, Ռուսաստանի ներքը կտունկն յեղափոխական շարժումներ, դրա անարջի մը պայմանները շտա աւելի նպաստաւոր են, քան առայժմ ուս-ճապոնական պատերազմի ժամանակ: Այստեղից և եղբակացութիւն.

ուս հակառուչելի ուժերը պէտք է լինեն ճապոնիայի կողմը, ամէն կերպ աջակցեն նրան, ք հարկին, նաեւ կամաւորական խմբեր կազմեն և ճապոնացիների կողքին կուեն կարմիր բանակի դէմ: Եթէ հարկաւոր է, ուսական հողերից որոշ կտոր է՛լ կարելի է գոհել, միայն թէ ճապոնիան օգնէ խորհրդային իշխանութիւնը տապալելու:

Աջակցմեանների այս յտակ «ճապոնասէր» տեսակէտին հակադրում է մի նոյնքան յտակ «հակաճապոնական» տեսակէտը Հանրապետական-Ռամկալար Միութեան կողմից՝ Միլիկովի գլխաւորութեամբ և «Պոլիտեխնիկ Նովոռոտի» թերթի բերանով: Մրանց կարգախօսը նոյնանում է Ստալինի կարգախօսին. ո՛չ մի խորհրդային հող: Միլիկովը ալակողմեաններին համարում է հայրենիքը կուսականների և խօսք չի գրտնում դատապարտելու համար նրանց: Մրանք էլ Միլիկովին մեղադրում են իրրեւ բուլղարական, գործաւիրից Ստալինի և այլն: Հանրապետական-Ռամկալարները համոզւած են, որ ճապոնացիք, եթէ դրանք Հեռուոր Արեւելքի ուսական հողերը, այլ եւս յետ չեն քաշի. այդ հողերը ընդմիշտ կորած կը ընեն Ռուսաստանի համար: Միւս կողմից, հակառուչելիկեան ռազմադաւա ստեղծելու յոյսն էլ անիրական է, որովհետեւ ճապոնիայի համար բնաւ ձեռնուտ չէ Ռուսաստանի ազատագրումն աւ գորացումը: Ընդհակառակը, ճապոնացիք կաշխատեն, որ բուլղարները շարունակեն մնալ Ռուսաստանի իշխանութեան գլուխը, պայմանով որ Բայկալից դէպի արեւելք շտա չուժեղանան: Միլիկովը յայտարարեց, որ եթէ Մորհրդը՝ Միութիւնը պատերազմի բունի ճապոնի հետ, ինքը կը լինի կարմիր բանակի հետ:

Ընդհանուր աւմամբ, նոյն դիրքը պաշտպանեց և Կամաւորական Բանակի նախկին հրամանատար գոր. Դենիկինը, հրապարակային մի դեկուցման մէջ:

Հանրապետական-Ռամկալարների տեսակէտին որոշ չափով մտնում է և սոցիալիստ-յեզափոխականների տեսակէտը: Այս կուսակցութիւնը հիմա բաժանւած է երեք թեւերի. Զախակ. դըր գրաւում է Վ. Չերնովը մի քանի ընկերներով, որ Հեռուոր Արեւելքի գէպերի առթիւ կարծի չչալանեց: Կենտրոնի արտայայտութիւնն է վարի կողմ: Այլ թեւ ուղղութիւնն է Ա. Գերենսկիի, Ն. Ալիսենտիւիի և ուրիշ նոյնամիտ ընկերների ու «Դնի» երկաշարթաթերթի պաշտպանած

վարքադիրը: Քերենսկին համար էլ անվիճելի է, որ ձապոնը նպատակ ունի գրաւել ուսանակի Հեռաւոր Արեւելքի որոշ շրջանները և այդ նպատակի համար մի առ ժամանակ կը քաջաբերէ ու յոյսեր կը ներշնչէ «պիտակ ուսանելին», բայց հէնց որ զգրաւեն ու ամբանան Մանջուրիայում և ներքին Մոնղոլիայում, ճապոնացիները իրատ քարկանական դիրք կը բռնեն բոլշևիկներին նկատմամբ և Լեհաստանի հետ միասին կաշխատեն կանգուն պահել բոլշևիկեան բռնատիրութիւնը Մոսկայում, իբրև մի ոչ, որ տկարացում է ուս պետութեան գորութիւնը և քաջբալում ազգային դիտակցութիւնը: Սակայն, հակառակ Միջուկովի, Քերենսկին համոզում է, որ խորհրդային իշխանութիւնն անկարող է պաշտպանելու Ռուսաստանի հողերի անձեռնմխելութիւնը: Յանուն իշխանութեան պահպանութեան բոլշևիկները սեղի կը տան ճապոնացիներին առջև և պատասխանատուութիւնը կաշխատեն ձգել այն տարրերի վրտ, որոնք այժմ պաշտպանում են ճապոնացիներին հետ գործակցելու պայտփարը:

Այս պայմաններում ի՞նչ անել: Արտասահմանի տարաբարութիւնը անզոր է աղկելու զէպլերի վրտ: Վեց մնում է կոշ ուղղել երկրի բոլոր կենդանի ուժերին, մէջը հաշկելով և դրաստացող կոմունիստներին ու կոմերիտակներին յաղթահարելու ստալինեան բռնատիրութիւնը, որ օրէցօր Ռուսաստանը մտանում է թշնամիների ձեռքը:

Այս առթիւ Քերենսկին դիմում է ո՛չ միայն բուն ուսանելին, այլ և օտարախոհներին. «Մենք պէտք է կոշ անենք և Ռուսաստանի այլազեղ ժողովուրդներին՝ մտանալ հին միջերը, եզրագործէն միանալ ներքին ընդհանուր դատման թշնամու դէմ՝ յանուն ազատ, իրար հաւասար, ինքնավար ժողովուրդների ազատ միութեան ստեղծման, որը համարալիս, իբրև մի Արզերի Փոքր Դաշնակցութիւն, միացելու ուժերով պաշտպանել իր միջպագային ու անտեսական շահերը, իր տեղը արեւի տակ համաշխարհային ամբողջութեան մէջ» («Դիւ», 7 փետր. 1932):

Ընթերցողը կը նկատէ, անշուշտ, այն ձևակերպումը, որ տրուում է ազգային խնդրին ապագայ Ռուսաստանում: Մինչև այժմ սոցիալիստ-ինդախոհականները խօսում էին սոլորական «Ֆիզիքացիայի» մասին: Վ. Չերնովի հատուածն էր միայն, որ որոշ կերպով դրքն Ռուսաստանը ազգերի ազատ միութեան վերածելու պայտփար է նոյն իսկ անշուտան սկզբունքը: Ա. Քերենսկին ապիս է ծօտաւորապէս նոյն ձևակերպումը, բայց առանց անկախութեան պայմանի. «ազատ, իրար հաւասար, ինքնավար ժողովուրդների ազատ միութիւն», մի տեսակ մղղղերի Փոքր Դաշնակցութիւն»: Սա, ի հարկէ, ողջունելի յառաջդիմութիւն է, որ ապացոյց է մտքի յստակութեան:

Հեռաւոր Արեւելքի հարցում բոլորովին ուրոյն դիրք են զբաւել ուս սոցիալ-դեմոկրատները իրենց «Սոց. Վեստնիկ» պաշտակաթիւթով: Երանց աչքին ճապոնական սպանալիքը վտանգաւոր է ակել ներքին տեսակէտից. պատերազմի զէպլում խորհրդային իշխանութիւնը ստիպւած կը լինի գիշումներ անել դիւզացիութեան, սեղի ապ դիւզացիական տարրերի առաջ, մի բան, որ յի է բռնապարտիթի յաղթանակի վտանգներով: Որքան և թերութիւններ ունենայ Ստալինի միտհեմոտութիւնը, ուսական յեղախոհական զարգացման տեսակէտից, նա նախընտրել է, քան դիւզացիական յետդէմ իշխանութեան հաստատումը: Ռատի, ուս-ճապոնական բռնաբարման մէջ բոլոր ուժերով պէտք է պաշտպանել խորհրդային իշխանութիւնը: Սոցիալ-դեմոկրատները կարծիքով՝ ուս բոլոր քաղաքական հասանքները «պարտաւորական» են, իբրև միայն՝ հեռուողական կողմնակիցներ են խորհրդային Ռուսաստանի պաշտպանութեան:

Ինչպէս տեսնում ենք, կան մերձեցման կէտեր որոշ հասանքների մէջ, բայց միաձայնութիւն՝ չկայ:

Ռուս քաղաքական տարաբարութիւնը նոյն իսկ հայրենիքի պաշտպանութեան պէս մի կարևոր հարցում չի կարողանում ընդհանուր լիզու գտնել:

ՍՈՑԻԱԼԻՍՏ-ՑԵՆՏՐԱԿՈՆԵԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՁԸ

Սոցիալիստ-Ցեդախոհական Կուսակցութեան Արտասահմանի Կայմակերպութիւնների Երջնաային Կոմիտեն և Կուսակցութեան Արտասահմանան Պատերազմութիւնը անհրաժեշտ են համարում ապ կաշխատի Արեւելքում սեղի ունեցող զէպլերի առարկայական զնահատութիւնը և այդ զէպլերի կապակցութեամբ որոշել Կուսակցութեան արտասահմանան կայմակերպութիւնների վարքադիրը:

Ճապոն աշխարհակալութեան յամառ ու յարատեւ նախապարտաւորութիւնը բրձակելուը Չինաստանի վրտ ստացաւ Չինական Հանրապետութեան պատկանող մի աճապին հողամասի բաց ու բացալայտ գրաւման մէ: Ճապոն կտոպարութեան ձգտումը այդ գրաւումը վարադուրելու հանկախ մանջուրական պետութեամբ չի կարող խաբել և ոչ ոքի:

Մանջուրիայի գրաւումը, պատերազմական գործողութիւնները Շանխայում, Չինաստանի մի շարք ուղղական կէտերի գրաւումը ճապոն գործերի կողմից և ճապոնացիների յոտալիսազացումը զէպլի ներքին Մոնղոլիան գտեհկորէն խախտում են Չինական Հանրապետութեան անկախութիւնը, հողային ամբողջութիւնը և նրա ազգարեակութեան կենսական շահերը:

Միևնոյն ժամանակ, այդ գործողութիւնները խախտում են բաց դուներ սկզբունքը, որ բունութեամբ պարտադրում է Չինաստանին և պաշտպանում է աշխարհակալ պետութիւնների կողմից, և հէնց դրանով համաշխարհային նոր պատերազմի ծաղման պայմաններ են ստեղծում:

Այդ հնարաւոր պատերազմում Բայկալեան լճից զէպլ արեւելք գտնող ուսական հողը և առաջին հերթին Մերձծովեան Երջնայի խաղաղովիտանտեան առքաւորած նուասանդտի, Վլադիվոտոտի հետ միասին կարող է դառնել (և ճապոնական մի շարք աղբիւրներ հաստատում են այդ) ճապոնական զրաւումների առարկայ ճապոնական դիւում ուժերի համար ռաբրմադական նպատաւոր դիրքեր ստեղծելու նպատակով:

Միևնոյն ժամանակ հէնց Մանջուրիայի գրաւումը ինքնին ուղղում է բոտ հուութեան ոչ միայն Չինական Հանրապետութեան, այլ և Ռուսաստանի շահերի դէմ, որքան որ սրանք կապում են Չին-Արեւելեան երկաթուղու հետ: Այդ շահերը առաջնակարգ ստեսական և մշակութային կարևորութիւն ունին ուսական բովանդակ Հեռաւոր Արեւելքի համար, և նրանց ապահովութիւնը համապատասխան դաշնակցութիւնը Չինական Հանրապետութեան հետ միակ հնարաւոր լուծումն է ուսական այդ աճապին հեռաւոր-արեւելեան հողամասին վերաբերող մի շարք կենսական խնդիրների: Գերիշխան Չինական Հանրապետութեան փոխարինումը Մանջուրիայում ճապոնական ճանկախ մանջուրական պետութեամբ ոչ միայն հոթից խախտում է այդ շահերը, այլ և վերացնում է նրանց հետ փայլած խնդիրների խաղաղ ու յարատեւ բարեօրման կարկիւթիւնը:

Բայց այդ, Չինաստանի հողի վրտ և Ռուսաստանին սահմանակից նման ֆապոնական ճանկախ մանջուրական պետութեան երեւումը Հեռաւոր Արեւելքում կը ստեղծէ միայն ճապոնացի, որ ամէն վայրկեան կարող է պատերազմի թիթ տալ: Այդ պատերազմի նպատակներից մէկը կը լինի հեռաւոր արեւելեան հողերի անշուտումը Ռուսաստանից, մի նպատակ, որ կը սկզբի շրջանում, թերեւս, և չհետապնդէ ուսական

Հեռուոր Արեւելքը քաղաքայտ ճապոնական դադուծի վերածել, բայց ճապոնական ռաքմապաշտութեան համար կը ձգտի ապահովել խաղաղութիւնն ստանալն և հաւաքուստեան ռաքմապաշտական դիրքերը: Այդ հնարաւոր բախման մէջ Ռուսաստանի հաւանականութիւնները դրաւապէս խախտուած են այն անհանդուրժելի քաղաքականութեամբ, որ Կոմունիստական Կուսակցութիւնն ու խորհրդային իշխանութիւնը երկար տարիներ ինքնացիւմ հետապնդել են Ձինաստանում՝ ձգտելով քաղաքային Ձինական Հանրապետութիւնը:

Իսկ Ձինական Հանրապետութեան քաղաքայումը ինչպէս առաջ, այժմ էլ ձեռնտու է քաղաքային ճապոնական կայսերապաշտութեան, որ լայնորէն գծել ու նախապատրաստել է Մանջուրիայի և Մոնղոլիայի նահանսն ծրագրերը: Խորհրդային կառավարութեան քաղաքականութիւնը Ձինաստանում նպաստել է քաղաքային կայսերապաշտութեան առջ երկրում (ճիշտ այնպէս, ինչպէս նոյն բանին նպաստել է և Ճապոնիայի քաղաքականութիւնը), և դրանով վերացրել է ճապոն աշխարհակարգութեան ճանապարհին գոյութիւն ունեցող միակ ուրիշ խոչընդոտը — միացեալ Ձինաստանը: Կարևոր շախմատ Հէնց այդ քաղաքականութեան հետեւանքով է, որ այժմ ռուսական հեռուոր արեւելեան սահմանները և Խորհրդ. Միութեան ժողովուրդները կենսական շահերը գրած են ճապոնական հարածի տակ: Ձինական Հանրապետութեան քաղաքայումը արաքացնում է նաև բարենպաստ պայմանների ստեղծումը նոր պատերազմի շահագրգռուած դրամատիքական երկրներին միջև:

Ինքն ըստ ինքեան հասկնալի է, որ ճապոն ժողովրդի շահերը բնաւ չեն համապատասխանում Ճապոնիան պատերազմի արհաւիրքների դիրքը մղող և ղէպի անխուսափելի փլուզումների տանող ճապոն կայսերապաշտութեան շահերին: Միայն Ձինաստանի, Ճապոնի և Ռուսաստանի խաղաղ գործակցութիւնը միջոց կը տայ Ճապոնին ևս լուծելու իր առջև եղած կենսական խնդիրները:

Ճապոնական զորքերի ընդունումը Ձինական Հանրապետութեան սահմաններից ներս, քաղաքների անբռնումով ու խաղաղ բնակչութեան բնաջնջումով ահալին վնաս է հասցնում և իրեն՝ ճապոն ժողովրդին: Եւ ջերմ կարեկցութիւն է առաջ բերում իննական ժողովրդի Հանդէպ թուրք աշխատաւոր զանգաւանների մէջ, որոնք մայրենի են նրան՝ ընկերային և քաղաքական արդարութեան սկզբունքներով լուծել ներքին բախումները:

Սոց.—Յեղ. Կուս. Երջ. Կոմիտէն և Արտասահմանի Պատերազմութիւնը Ընկերակազմական Միջադաշինի հետ միասին բողոքելով ընդդէմ պատերազմի, որպէս միջադաշին բախումների լուծելու միջոցի, և մասնաւորապէս ընդդէմ ճապոն դիւսած ռուսերի ներխուժման Ձինաստանի սահմաններից ներս, դատաւարարում և մերժում են ամէն մի անխուսափելիորէն սխալ փորձ, որտեղից և ինի, օգտագործելու արդէն սկսուած չին-ճապոնական բախումը և հնարաւոր ռուս-ճապոնական ընդհարումը: Ռուս արևողդեան տարագրութեան յոյսերն ու հաշիւները՝ թէ ճապոնական ներխուժումից յետոյ Մանջուրիա ու Մոնղոլիա՝ ճապոնական զորքերը կը գրաւեն Ռուսական Հեռուոր Արեւելքը՝ «միջնորդ» պետութիւնը ստեղծելու նպատակով՝ ոճրագործ ու վնասակար են Խորհրդ. Միութեան ժողովուրդներին Համար: Միայն ու վնասակար են նաև Կոմունիստական Կուսակցութեան Ձինաստանի քաղաքային կայսերապաշտութեան հետ կապուած հաշիւները, որոնց հետեւանքը եղաւ ոչ միայն խորհրդային կառավարութեան կեղծաւոր բարեկամութիւնը ճապոնական ռաքմապաշտութեան հետ, այլ և անմիջական ճապոնական պատերազմի սպառնալիքը ռուսական հեռուոր-արեւելեան սահմաններում:

Սոց.—Յեղ. Կուս. Երջ. Կոմիտէն և Արտաս. Պատերազմութիւնը կոչ են ուղղում կուսակցութեան թուրք անդամներին՝ արևելքու խաղաղութեան և Ռուսաստանի Հեռուոր Արեւելքում ունեցած շահերի պաշտպանութեան՝ քաղաքային ու պաշտպանելով վերեւ պարզաբանուած տեսակէտը:

Իսկ եթէ տեղի ունենայ Ճապոնի և Խորհրդային Միութեան միջև դիւսած բախում՝ նպատակ ունենալով ռուսական հողերի գրաւումը ճապոն աշխարհակարգութեան կողմից, Սոց.—Յեղ. Կուս. Կազմ. Երջ. Կոմիտէն անհրաժեշտ է իննել սեփական ժողովուրդի հետ և ամէն միջոցով արգելի հանդիսանալ Ռուսաստանին պատկանող հողերի գրաւում փորձերին:

Սոց.—Յեղ. Կուս. Արտաս. Կազմ. Երջ. Կոմիտէի անդամներ՝ Վ.Մ. Լեբեզև, Ֆ. Ե. Մարին, Օ. Ս. Միտր, Լ. Վ. Ռոսնի:

Սոց.—Յեղ. Կուս. Արտաս. Պատերազմութեան անդամներ՝ Ս. Գ. Պոստնիկով, Մ. Լ. Սլոնիմ, Ե. Ա. Ստալինսկի, Վ. Վ. Սուխոմոլն:

Գրախօսական

(Ա. Իզով, Հնգամեակ, հրատ. «Սոց. Վեստնիկի», Բելլին).

Ա. Իզովը ռուս տնտեսագէտ է և Ռուս. Սոց.—Դեմ. Կուսակցութեան պաշտօնավար Ֆերլինի «Սոց. Վեստնիկի» խմբագրութեան անդամ: Նրա «Սոց. Ռուսաստանի ժողովրդական տնտեսութիւնը և իր խնդիրները» գիրքը, որ լոյս տեսաւ 1928 թ. հին և ամփոփում էր նեպի շրջանի խորհրդային տնտեսութիւնը, Թարգմանեց մի քանի եւրոպական լեզուներով: Սոյն գրախօսականի նիւթ կազմող Հատուրը ներուած է խորհրդային տնտեսութեան յետմեծական շրջանին՝ հնգամեակին և, ինչպէս առաջինը, նոյնպէս յազգեցած է ստատ փաստերով, վիճակագրական տեղեկութիւններով ու պիտական լուրջ հիմնաւորումներով ու երաբակացութիւններով:

Մեթոդորդիական տեսակէտից Իզովի գիրքը ունի մի հիմնական արտա. նրա օգտագործած նիւթերը առնուած են քաղաքային խորհրդային աղբիւրներից, իսկ խորհրդային վիճակագրութիւնը աշխարհի ամենաանվտանգելի վիճակագրութիւնն է, յայտնի իր միտումնաւոր ձգտումներով: Իզովը ինքն էլ ընդունում է այս վերջին հանգամանքը, բայց և այնպէս դատում է, որ փր պակասութիւններով Հանդերձ խորհրդային վիճակագրութիւնը բաւական ճշգրտով է պատկերացնում խորհրդային տնտեսութեան գարգացման ընթացքը:

Այս թերութիւնը, սակայն, չի նսեմացնում Իզովի գրքի արժէքը. Հէնց խորհրդային աղբիւրներից քաղած

փաստերով նա հաստատում է այն, ինչ որ հաստատում են և ուշ-խորհրդակցին ազդերինների տեսանկերը, այսինքն՝ որ Հնգամեայ ծրագիրը անիրական է թէ իրեն Պորտրը: Միութեան արդիւնաբերութեան ու զիւզանու-տետեութեան գարգացման ծրագիրն է թէ որպէս Հիմք ընկերվարական հասարակագրի:

Ինչպէ՞ս է մտնելու Տարբեր իւզովը:

Ամենից առաջ նա պատմում է Հնգամեակի ծագման պարագաները: Հնգամեակը մտնել է առև Կոմ-կուսի ծնունդ և գոյութիւն ունեցող երկու մրցակից հո-սանքների պայքարի բովից, իրեն հետևանք Ստալինեան «քննչանքական գծի» յաղթանակի: «Ընչհանրապե-կան գիծը» ըստի համարվարացման քաղաքականութիւնն է իր կոլիտագուսմանով ու կուլակաթափու-թիւններով:

Հնգամեակի հիմքը ծրագրում տնտեսութիւնն է: Գեո. Լենինը երազում էր ամբողջ խորհրդային տնտե-սութիւնը ծրագրի տակ դնելու մասին, և այդ նպա-տակով էլ կազմեց պետական ծրագրային մի մարմին՝ Գոսպլանը, բայց առաջին անգամ կարելի եղաւ ծրա-գիր կազմել միայն 1925-26 տնտեսական թեւակահին, որից յետոյ զեկտեմբերի 15-ին տարեկան ծրագրիներով: 1929թ. Կոմկուսի 15րդ համագումարի հրահանգով Գոսպլանը կազմեց առաջին հնգամեայ ծրագիրը, որ հաստատեց համամիութենական խորհուրդների նրդ համարումարի և Կոմկուսի 16րդ խորհրդատոյով կող-մից 1929թ. մայիս 28ին և դարձաւ տնտեսական դերա-գոյն որչէր Միութեան պետական բոլոր հիմնարկու-թիւնների համար:

Իւզովը տալիս է մեթոդաբանական այն փոփոխու-թիւնները, որոնց ենթարկեց Հնգամեայ ծրագիրը մշակութեան ընթացքին: Սկզբում ենթադրում էր իր-րե ղեկավար սկզբունք ընդունել երկրի առարկայական պայմաններ և տնտեսական կարելիութիւնները, բայց փաստը ցույց տուց, որ այդ սկզբունքներով կարելի չէ կազմել Կոմկուսի ցանկացած ծրագիրը: Երկրի առար-կայական վիճակն ու տնտեսական հնարաւորութիւննե-րը թոյլ չէին տալին: Այն ժամանակ պայտօնից հեռաց-ւեցին «առարկայական պայմանները» պաշտպան մաս-նազտները և տեղը նշանակեցին ուղղափառ համա-յնակները, որոնք յայտարարեցին, թէ իրենք «զարտե- են տնտեսական դարձումը օրինակութեան ենթարկե-ւելուց» և ղեկավարում են «նպատակաւորութեան սկզբունքով»: «առարկայական ազդերներ չկան», պէտք է կամենալ և յաղթել: Եւ այդ սկզբունքներով էլ կազմեցին ծրագիրը:

Մի ուրիշ կողմէն. «քննչանքական գծի» հակա-ուակողմները և մասնաձող Տրոցկին, պնդում էին, թէ Ռուսաստանի պէս յետամնաց մի երկրում, առանց առաջուր դրամատիրական երկրների մասնակցու-թեան, կարելի չէ ընկերվարութիւն կառուցանել: Ինչ-պէս յայտնի է, Լենինն էլ նոյն տեսակէտին էր և վր ամբողջ յոյսը դրել էր ճամաչխարհային յեղափոխու-թեան վրա: Հնգամեայ ծրագրի հիմքում զրեց տրա-մալծօրին հակառակ տեսակէտը: դրամատիրական աշ-խարհը մտն է կայունացման շրջանի մէջ, խորհրդա-յին տնտեսութեան ղեկավար սկզբունքն է սեփական միջոցներով և անենակարճ ժամանակամիջոցում հաս-տատել Պորտրը: Միութեան սահմաններում ընկերվար-ական տնտեսութիւն, փակ ընկերվարական տնտեսու-թեան առաջին պայմանն է ծրագիրը: Այստեղից՝ և հնգամեայ ծրագիրը:

Հնգամեայ ծրագրի անմիջական նպատակն է արա-գորէն ուժեղացնել ճարտարաբանուր և արտադրու-թեան ու մշակոյթի բոլոր առարկայներում հասնել ու-սանցնել Եւրոպայից և Ամերիկայից: Ծրագրի անմի-ջական ձգտումն է երկիրը տնտեսական տեսակէտից դարձնել ինքնուրույն, խորհրդային ճարտարաբանուր ու նուժ նիւթերի հայթայիթ բոլորովին արտա կաշու-ցանել արտաքին դրամատիրական աշխարհից: Ճար-

տարաբանութիւնը գորգացման համար պահանջում է հսկա-յական դրամաւարկութիւնը աննկ գիւղացութիւնից և մասամբ արտասահմանից: Գիւլըր հեղաշուժ զինւ հա-ւաքական տնտեսութեան անխնայի վրա, առանց, սա-կայն, բռնի և հազմեղ քայլեր: Գոստական շրջանա-րուցութիւնը պահէ: Բարձրացնել կանխութեան նիւթա-կան ու հողեքոր մակարդակը: Մի խառքով, ձերկիր-հացնել նիւթական ու մշակութային իրազացման նոր, շտեմուած բարձր աստիճանի:

Այնուհետեւ իւզովը նկարագրում է Հնգամեակի իրադորձման պարանները, թէևրով, փաստերով, բաղաձիւ պիւսուակներով և ընտան համեմատու-թիւններով ցոյց է տալիս արդիւնաբերութեան, երկրա-գործութեան, երկաթուղիների, շուկայի ու մասակա-րարման գործի, դրամական վիճակի, աշխատանքի, ընկերային-մշակութային կենտրոն գորգացման ուղիները: Գրախօսականի սահմանափակ տեղը թոյլ չէ տա-լիս, բայց շատ հետաքրքրական կը լինի Հնգամեայու-րէն ծանօթանալ իւզովի ընդարձակութեան: Երա եղ-րակացութիւնները սպանել են խորհրդային տնտեսու-թեան համար:

Նա ցոյց է տալիս որոշ քանակական յաղոյութիւն արդիւնաբերութեան մէջ, բայց որակի տեսակէտից նաճում չի տեսնում: «Քրթանի համար մշաւած պայքարի ընագաւատում մենք նաճում ենք, ունենք, ունենք, սակայն մենք ստիպւած ենք հաստատել, որ պարզապէս յետ ենք դնում», վկայում է Ժողովրդական մտնտեսութեան Գե-րազոն Պորտրի նախագահ Կուլիքչևը: Ապրանքների ինքնարժէքը փոխանակ իջնելու՝ բարձրանում է: Ծիւ-ւած գործարանների մի մասը կանց է առել հում նիւթ չլինելու հետևանքով, կամ, առել վաւ, որովհետեւ ապարարեքներ չկան:

Գիւղատնտեսութեան մէջ հակառակ Հնգամեակի որոձման, կատարում է բռնի կոլիտացում: Ըստ ծրագրի, միայն 1932ին կոլիտացիոն պիտի կազմէին զիւղանտնտեսութեան 9,6%ը, իսկ զիւղացութեան 89,6%ը պիտի մնար անհատական սեկտորում», մինչ-դեռ արդէն 1933ին զիւղացիների 53%ը կոլիտացւած էր, որի « հետևանքով երկրագործութիւնը մեծ կորուստներ ունեցաւ: միայն 1929 տարւա ընթացքում ձիերի քանակը պակասեց 11,6%ով, խոշոր կովերաւ-ւոր անասունների 20%ով, կովերի 11,1%ով, ոչխարների 24,3%ով՝ ու խոզերի 35%ով»: «Բռնի հաւաքականացման և կուլակաթափութեան պատճառով զիւղացութիւնը գերազատում էր մորթել անասունները և ուտել, փոխանակ կոլիտացիոն յանձ-նելու»:

Նոյնն է վիճակը և կենճեր միւս ասպարէզներում, բայց, մասնաւորապէս, մանր և աշխատանքի ընագա-ւատում: Ճիշտ չէ, որ Պորտրը: Միութեան մէջ գոր-ծադրութիւնը վերացւած է. նա միայն ուրոյն ձեւ է ստացել: 1927-28 թւին պաշտօնապէս արձանագրւած էր մօտ 2 միլիոն գործազուրկ: Աշխատանքի բորանքի վերացումով և գործադրութեան յրձարքով՝ ար-ձանագրւած գործազուրկներ չմնացին, բայց հո այդ 2 միլիոնը միջուկից շլկերալեւց: Ճիշտ է, նրանց մի մասը գործ ստացաւ, բայց միւս մասը մնաց գործա-զուրկ: Բացի այդ, զիւղը շարունակում է արտադրել քանակ ձեւերը, որոնցից շատերը մնում են անզուրկ: Հնգամեայ ծրագրից կազմելիս Գոսպլանը հաշուում էր, որ Հնգամեակի վերջին, քաղաքներում կը մնայ մօտ կէս միլիոն գործազուրկ և զիւղերում՝ մօտ 2,6 մի-լիոն:

Հակառակ այս հաշի, բոլշեկիներն այժմ խօսում են ո՛չ թէ գործազուրկութեան, այլ աշխատող ձեւերի պակասի մասին: Ինչո՞վ է բացատրւում այդ: Իւզովը ցոյց է տալիս երեք հիմնական պատճառ: Եւսի՝ ճար-տարաբանայի անուր ստալինի երկու տարւայ ընթաց-քում մօտ 1,8 միլիոն բանուր և պաշտօնակ է ներ-գրուել. երկիրը՝ կոլիտացման հետևանքով զիւղա-

ցիները մի առ մասնակ մուտ են զվարժում, որ անձնակն Կերպարութեամբ կարգադրեն իրենց դործերը, և, երբ որ, ապրուստի դժարութիւնները մարդկանց նորից զարգանիլից բուտ են զիւր:

Հնգամեակով նկիւղբուտ էր որոշ շախմով բարձրացին բանւորները Նիւթակն վիճակը: Վերակառնութիւնը, ասում է Իւզովը, Հնգամեակի համեմատ մտադրութիւններից էլ շատ աւելի վատ դուրս եկաւ: Չնայած աշխատավարձի արտադրութեան և, մասնաւոր, լարման աճումին, անւանական աշխատավարձը երկու տարւայ ընթացքում բարձրացաւ միայն 6% ու: Իսկ իրական աշխատավարձը թիղթարմի արժէքագրիման հետեւանքով դրայի շախմով ընկաւ: Աշխատանքի պայմանները վատացան. «սոցիալըուր» փաստօրէն աւելացրեց աշխատավարձը. բանւորներն այժմ աշխատում են օրական մինչև 10 և 12 ժամ: Գիշերայ աշխատավարձը հաստատեցում են ցերեկային: Բանւորները ամբարշտ են ձեռնարկութիւններին և տեղ փոխելու իրաւունք չունին: Պատիճներն ու սուղանքները սովորական երեւոյթ են: Ճարպաւոր է կանանց և փոքրահասակների զինչըային աշխատանքը: Կանայք բանեցում են հանքերում, գետնի տակ: Մի խօսքով, «բանւորական» պետութեան մէջ բանւորի վիճակը շատ աւելի վատ է, քան զբանւորական ամենախտամանց երկրներում: Խորհրդային բանւորը պաշտպանելու ոչ մի հնարաւորութիւն չունի. արհեստակցական միութիւնների պետական մարմիններն են, որոնք դործարարում են կառավարական հրամանները:

Բանւորների ապրուստի պայմանները պատկերացնելու համար որոշ բերեց մի քանի թէր: Մոսկուայի և Պետրոգրադի առաջին կարգի բանւորներին 1931թ. մամբը միջեր էր հասնում ամսական հետեւեալ քանակով ու զննորով*): Նախք 1.5 թիւ, թիւն 7.5 Փրանկ արժէքով, թէյ 25 դրամ — 5 Փրանկ, մակարոնի՝ կէս թիւ — 2.5 Փր., ճաւար՝ 1.8 թիւ — թիւն 12.5 Փր., մինչև 31.5 Փր., բուտ տեսակի, մարզարկի կէս թիւ — 8 Փր., աղի ձուկ՝ 1 թիւ — թիւն 10 Փր. մինչև 15 Փր. բուտ տեսակի, ձուկ՝ կէս թիւ — 6.5 Փր., հասարակ սպարոն՝ կէս թիւ — 5 Փր., երեւի սպարոն՝ 1 կտոր — 6.5 Փր., ալիւր՝ 2.5 թիւ — թիւն՝ 17.5 Փր., միս (7 սնակով) 300 դրամ — թիւն՝ 12.5 Փր., հաց՝ 20-40 թիւ — թիւն՝ 14 Փր., կարձ, միայն երեսաներին, կէս լիտր երկու օրւայ համար — լիտր՝ 5 Փրանկ:

Այ՛ պաշտօնական յտկացումն է: Իրականութեան մէջ, ի հարկէ, միջերների որոշ մասը չի տրբում: Պակասած միջերը բանւորը ստիպւած է լինում զնն զագատ շուկայից, ուր ամէն բան անհամեմատ աւելի թանկ է: 1931թ. մայիսին «ագատ շուկայի» միջերի զննրը հետեւեալն էին. շաքարը՝ թիւն 30 Փրանկ, թէյի 25 դրամը՝ 12Փր., ձուկը՝ թիւն 50Փր., հասարակ սպարոն՝ 25-37.5 Փր., երեւի սպարոն՝ 19 Փր. կտորը, ալիւրը՝ թիւն՝ 25 Փր., միւրը՝ թիւն՝ 60-100 Փր., կարպը՝ թիւն՝ 300 Փր., սպիտակ հացը՝ 25 Փր. թիւն, կարթի լիտրը՝ 19 Փր., 10 հակիթը՝ 62 Փր., գետնախնձորը՝ թիւն 12 Փր. և այլն:

Այս պայմաններում բանւորների և, առհասարակ, աղաքանակութեան ապրուստը, ի հարկէ, շատ դժար է: Իւզովը բերում է բացմաթիւ փաստեր, որոնք ամենամոտայլ գոյներով են պատկերացնում ժողովրդի կենցաղային վիճակը: Բաւական է լինել, որ 1926-1930 թ. Միութեան սահմաններում անպարզէանների տոկոսը 51.3% ըր բարձրացել է 62.3%. զբաղարանների, երեկոյնական դասընթացների թիւը պակասել է. առողջապահական վիճակը վատացել է: Մի խօսքով, բացի ար-

դիւնարեութեան ընդհանուրում կատարւած որոշ տխրեկական նաճումներից, ամէն կողմ մոտայլ երեւոյթներ:

Այնուհետև, ջննելով արդիւնարեութեան, երկրագործութեան հաւաքանակացման և երկտախան-դրամական խնդիրները՝ Իւզովը հարց է տալիս՝ «Արդեօք Խորհրդ. Միութեան տնտեսութիւնը ծրարւած (պլանային) տնտեսութիւն է: Եւ պատասխանում է. ո՛չ. ձեռնարկ-Միութեան տնտեսութիւնը կապիտալիզմ, իրար հետ միացւած տնտեսութիւն է, բայց ընա երեք ծրագրւած: Ծրագրւած տնտեսութիւնը ուժեղ է համադրութեամբ ու նախատեսութեամբ, խորհրդային տնտեսութիւնը ուժեղ է կենտրոնացումով և միասնական, ոչնչով չդիկալարող, հարւածային ձեերով դործող պետական կաճքով... Հնգամեակը ժակելու և յայտարարեց որպէս ծրարւած դրութիւն: Եւ, իրրեւ ծրարւած դրութիւն, ստաջին տարիներից իսկ չէր մացաւ փորձութեանն:

Այստեղից պարզ է և երկրորդ հարցի պատասխանը. ձեռնարկ-Միութեան մէջ ընկերարութիւն կառոււած է թէ ոչ»: Ի հարկէ, ո՛չ, պատասխանում է Իւզովը: Եւ վճռական կերպով ստարկում է ՕՅԹօ Բաուէրին, որ խորհրդային տնտեսութեան մէջ տեսնում է ընկերարութեան տարրեր: «Այոք, ասում է Իւզովը, աւելի քան 2-3 տարի առաջ, հիմք չկայ ենթադրելու, թէ ընկերարութիւնը կը յաղթանակէ Խորհրդ. Միութեան մէջ»: «Մենք ցնորք ենք համարում ընկերարութեան յաղթանակը Խորհրդ. Միութեան մէջ»:

Ընկերարութեան իրազորման համար անհրաժեշտ են որոշ նախարկարներ. զարտադրական ուժերի բարձր զարգացում, ազգայնակութեան բարձր մշակութային ստաճում, տնտեսական և քաղաքական պայքարի զարգացն անցած սուտր բանւորութիւն: Եթէ ենթադրենք, որ ընկերարութիւնը կարող է յաղթանակել Խորհրդ. Միութեան մէջ, ուր չկայ այս պայմաններից և ո՛չ մէկը, այն ժամանակ պէտք է ընդունենք, որ ընկերարութիւնը հնարաւոր է ամէն մի երկրում — Չինաստանում, Հնդկաստանում, Հարսասային Աֆրիկայում: Այն ժամանակ պէտք է ընդունենք, որ ընկերարութեան յաղթանակի համար սնրբաժեշտ են ոչ թէ տնտեսական, ընկերային ու մշակութային նախապայմաններ, ոչ թէ բազմաթիւ ու զործունենալ զգրամատերութեան գերեզմանախոր բանւորութիւն, այլ դործուն կոմունիստական մի կուսակցութիւն, որը ընդունակ է բնագործին իշխանութիւնը, գիտէ «խիղախել»: Այդ հաշւով, ընկերարութիւնը կարող է ամէն երկրի ներմուծել իրենների ծայրերի վրա»: Ոչ թէ ընկերարութիւն, այլ պետական դրամատերութիւն — այս է Խորհրդ. Միութեան զարգացման ուղին, ըստ Իւզովի:

Բայց նոյն իսկ այս սահմաններում «Հնգամեակը իրականանում է»: Այս հարցի պատասխանն էլ բացասական է: Ո՛չ, չի իրականանում: Հնգամեակը ծրարի հեղինակները դրում է ին. «Ճարտարաբանացման ծրարի իրագործումը մեծ դո՛ւր կը պահանջէ բանւորներից, բայց մենք կը կարողանանք ապահովել բանւորութեան յարաճուն կարիքները»: «Իրականութեւնը, ասում է Իւզովը, այլ դուրս եկաւ, շատ աւելի սարսափելի: Խորհրդ. Միութեան իւրաքանչիւր քաղաքացի լաւ գիտէ, որ Հնգամեակի հինգ երկրորդ տարւանից սկսած ինքը բառացի կերպով սովամահութեան է մատուել, որ ապրանքի սովը ամաէ ամիս ոչ միայն չի մեղմանում, այլ աստիճանում է, որ կօսկրատու խանութներում կան ամենանհրաժեշտ ապրանքներն անկամ... Ազգայնակութեան սպառումը ընկել է ռազմական կոմունիզմի օրերի ստորմանին»:

«Հնգամեակի երկու և կէս տարիների արդիւնքի յուրկ ուսումնասիրութիւնը պէտք է բերէ մեզ այն եզրակացութեան, որ չկայ ձնգամակի իրագործում, որպէս երկրի տնտեսական ու մշակութային ստորմանի

* Գճերը վեր ենք անել Փրանկներին՝ համաձայն չէրպանեց յուրյու պաշտօնական արժէքի — 1 Փրանկ = 8 կոպեկ:

բարձրացման ծառայող մի ծրագիր, այլ կայ միայն արտադրութեան ամանն ծայրայեղ սրած ի հաշիւ ընկերային և մշակութային պայմանների մահացման կամ այլաներման»:

Աւելի սուր ու մճուսկան դատաւարութիւն դժւար է երեւակայել: Որ կողմից և նայելու լինենք, հեզամեայ ծրագիրը իրական, երկրի առարկայական պայմաններէջ բնոյց և սնտեսական շահերին ու յառաջդիմութեան ծառայող ծրագիր չէ: Նա հնարած է քաղաքական նպատակներով, և, որպէս այդպիսին, երկիրը մտցրել է մի անելանելի փակուղու խորքը, որտեղից միայն մէկ ելք կայ — նահանջ բոլոր ճակատներում: «Անհրաժեշտ է արմատական հրաժարական բռնատիրա-

կան բեժիմից, վերջ տալ ցնորամիտ տնտեսական քաղաքականութեան և իրական համեմատութիւն առաջ բերել բանտոր դատաւարի և զիւղացիութեան միջև» — կերակացնում է իւզովը:

Անհրաժեշտ է, բայց Ստալինեան բռնատիրութիւնը ընդունակ է նման նահանջի: Պատասխանել այս հարցին նշանակում է դուրս գալ տնտեսական խնդիրներէ սահմանից և մտնել քաղաքականութեան ասպարէզ. իւզովը գերադասում է մնալ տնտեսական երկույթների շրջանում: Սակայն, նրա գիրքը առատ նիւթ է տալիս և քաղաքական եզրակացութիւնների համար. «ընդհանրական դիժը» քաղաքականօրէն էլ սնանկ է: Ս. ՎՐ.



« Դ Ր Օ Շ Ա Կ » - ի նոր հասցէն

ԱՅՍՈՒՀՆԵՏԵԻ «ԴՐՕՇԱԿ» - ԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ ՆԱՄԱԿ, ԳՐՈՒԹԻՒՆ, ԳԻՐՔ, ԹԵՐԹ, ԵՒ ԱՄԵՆ ԿԱՐԳԻ ԱՌԱՔՈՒՄ ՈՒՂԱՐԿԵԼ ՇԵՏԵԻՆԱԼ ՀԱՍՑԷՈՎ.
 Rédaction „DROSCHAK“ 71, ave. Kléber
 PARIS (XVI) France

ԴՐԱՄ ՈՒՂԱՐԿԵԼ. L. TADEVOSIAN 71, AVÉ. KLÉBER
 PARIS (XVI) FRANCE

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Թիւրքիան և Ազգերի Դաշնակցութիւնը (Սմբա- գրական)	97	Բաղաճական հոսանքները Պարսկաստանում (Յ. Հախնադարեան)	105
ԵՓՐԵՄ		Տնտեսական տագնապը Թիւրքիայում (Դ. Ջաւրիև)	108
Դէպի Իրանի Պանթոնը (Է. Ակնունի)	99	Կարմիր գծից ներս	109
Մեծ Անհատները (Ռ. Ջարդարեան)	99	Թիւրքիոյ շուրջ	113
Ընկած Ձիւտրի յիշատակին (Ս. Ջաւրեան)	101	Հեռաւոր Արեւիլի դէպքերը և ռուս տարագրու- թիւնը	115
Մեռալ (Դ. Ջօհաննիս)	102	Գրախօսական	117
Մարտիրոս Ջարուխչիան (Ռ. Սևեան)	102		

« Դ Ր Օ Շ Ա Կ » - ի

Թիւն արժէ 2 ֆր. 50 սանս.

« Դ Ր Օ Շ Ա Կ » - ի հասցէն՝

Rédaction «DROSCHAK»
 71, ave. Kléber. PARIS (16°)